Յուրընկալ «Արտեկը»

Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտը, հովանավորությամբ ՌԴ կրթության և գիտության նախարարության, կազմակերպեցին ռուսաց լեզվի միջազգային առարկայական օլիմպիադայի հաղթողների ամառային հանգիստը Ղրիմի «Արտեկ» ճամբարում:

Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի 30 աշակերտներ /ուսուցիչ՝ Ն.Նալբանդյան/ 2017 թվականի ապրիլ ամսին մասնակցեցին ռուսաց լեզվի միջազգային առարկայական օլիմպիադային և հաղթող ճանաչվեցին: Տասը աշակերտ, ովքեր սովորում են Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցում, Ելենա Վալեյկոյի ղեկավարությամբ, մեկնեցին Ղրիմ:

Լիլիթ Մանուչարյանը, Լիանա Դունամալյանը, Էլիզա Գարանյանը, Նոռա Մխոյանը, Միլենա Մելքոնյանը, Էլմիրա Շահվերդյանը, Անի Շահվերդյան, Հրանտ Բաբայանը, Վազգեն Եդոյանը, Գագիկ Ասլանյանը առարկայական օլիմպիադայի ընթացքում փայլեցին իրենց գիտելիքներով և ստացան հնարավորություն հանգստանալու «Արտեկ» ճամբարում: «Արտեկ» ճամբարը հագեցած էր ուսուցողական, զվարճալի, ճանաչողական, հետաքրքիր ու բազմաբովանդակ ծրագրով: Ծրագրի շրջանակներում երեխաներն իրենք էին ընտրում իրենց նախասիրությանը համապատասխան թիմեր՝ ձիավարժություն, հռոմեական խճանկար, լուսանկարչություն, դիզայն, վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ և այլն :

Ճամբարում Պուշկինի անվան ինստիտուտը անցկացրեց ռուսաց լեզվի խորացված դասընթաց և շարադրությունների մրցույթ շուրջ 50 թեմայով: Յուրաքանչյուր երկիր իր շարադրությունը ներկայացրեց թե՛ ռուսերեն և թե՛ իր մայրենի լեզվով:

Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի սաներ Էլիզա Գարանյանը, Միլենա Մելքոնյանը և Էլմիրա Շահվերդյանը փայլեցին իրենց շարադրություններով և հռետորական արվեստին բնորոշ առոգանությամբ /ինչը մրցույթի ժամանակ պարտադիր պայման էր/ գրավեցին պատվավոր տեղեր՝ ստանալով հուշանվերներ, իսկ Էլմիրա Շահվերդյանը, Անի Շահվերդյանը, Դունամալյան Լիանան, Եդոյան Վազգենը, Ասլանյան Գագիկը, Բաբայան Հրանտը, Մխոյան Նոռան, Մանուչարյան Լիլիթը, Մելքոնյան Միլենան, Գարանյան Էլիզան ռուսաց լեզվի մրցույթում արժանացան պատվոգրերի և մեդալների:

Իրենց ելույթներով մեր սաները փայլեցին նաև սպորտային, լուսանկարչական, ձևավորման մրցույթներում՝ բարձր պահելով թե՛ դպրոցի, թե՛ հայի պատիվը. սպորտային մրցումներում Էլիզա Գարանյանը և Միլենա Մելքոնյանը գրավեցին 1-ին տեղերը /վոլեյբոլ/, Էլիզա Գարանյանը՝ 1-ին տեղ /արտբոլ/, Գագիկ Ասլանյանը՝ 3-րդ տեղ /արտբոլ/, Նոռա Մխոյանը՝ 1-ին տեղ /ձկունություն/, Եդոյան Վազգենը սահմանեց սպորտային ռեկորդ, Միլենա Մելքոնյանը՝ հավաստագիր /ձիավարժություն/ և ձեռնամարտից՝ 1-ին տեղ, Բաբայան Հրանտը «Տուրգրադ» անվանակարգում՝ 2-րդ տեղ, Դունամալյան Լիանան, Մանուչարյան Լիլիթը, Մխոյան Նոռան «Բժիշկ Այբոլիտի դպրոց» անվանակարգում՝ հավաստագրեր և պատվոգրեր, լուսանկարչական և դիզայնի մրցույթներում Էլիզա Գարանյանը և Անի Շահվերդյանը՝ հավաստագրեր, Միլենա Մելքոնյանը՝ մեդալ՝ արվեստում ձեռքբերումների համար:

Նրանք հայրենիք վերադարձան պատվոգրերով, վկայականներով, արժանացան նաև «Կոլեկտիվի հոգի» անվանակարգին՝ իրենց դրսևորելով որպես ուժեղ, ամուր, մարդասեր թիմ:

Ճամբարը կազմակերպել էր նաև զանազան էքսկուրսիաներ: Երեխաներն այցելեցին Սևաստոպոլ, Խերսոն քաղաքներ, ծանոթացան նրանց պատմությանը և մշակույթին, ուսումնասիրեցին Վորոնցովյան, Մասանդրովյան պալատները, բարձրացան Այուդակ լեռը, որտեղ էլ նրանց օծեցին որպես արտեկականներ:

Ճամբարականների միջև կազմակերպված տարբեր մրցույթներն էլ ավելի հիշարժան և անմոռանալի դարձրին նրանց ամառային հանգիստը:

Անցկացվեց «Ազգերի բարեկամություն» խորագրով մրցույթ, որտեղ յուրաքանչյուր երկիր ներկայացրեց իր մշակույթը՝ երգը, պարը, ասմունքը: Մեր սաները այստեղ էլ անմասն չմնացին. ներկայացնելով մեր երգն ու պարը՝ արժանացան պատվոգրերի և ժյուրիի ճովասանքին: Երգի և պարի մրցույթում Լիանա Դունամալյանը, Էլիզա Գարանյանը և Միլենա Մելքոնյանը արժանացան գլխավոր մրցանակին, իսկ Գագիկ Ասլանյանը, Վազգեն Եդոյանը, Հրանտ Բաբայանը նույն մրցույթներում գրավեցին 1-ին տեղերը: Անհատական կատարումներում Միլենա Մելքոնյանը ասմունքի և Լիանա Դունամալյանը երգի մրցույթներում գրավեցին պատվավոր առաջին հորիզոնականները:

Ճամբարի փակումն ամփոփվեց խարույկով և մեծ հրավառությամբ: Երեխաների համար այս հանգիստն անմոռանալի էր և տպավորիչ:

Լուսինե Թադևոսյան